№ 220 Դեկտեմբերի 10 (22) 1880 Դեկտեմբերի 10 (22) № 220

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 Թուին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Ազգային լեզու։ Նամակ Երեւանից։ Նամակ Ղարսից։ Նամակ Իգդիրից։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Նամակ Օդեսայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Times» լրագիրը Անգլիայի արեւելեան քաղաքականութեան մասին։ Ֆրանսիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ

Բաւական դարեր ազգութեան միմիայն նշանագիր կրօնքը համարեր էինք, եկեղեցին ամենայն ինչ էր մեզ համար. հիմա սկսած ենք քիչ շատ ըմբռնել և հաւատալ ազգութեան մի աւելի կենսական խարսխի, այն է հայրենեաց գաղափարին. բայց ներուի ինձ ըսել որ հայրենեաց չափ ալ նուիրական և ազգութեան համար նոյնչափ կարեւոր բան մ'ալ կայ, որոյ մասին մեր թմրութիւնը տակաւին զարթած, մեր անձնասիրութիւնը տակաւին գրգռուած չէ և կը շարունակէ, և այս է Ազգային լեզուն, որում իբր ազգութեան յայտարար և որոշիչ նշան կարեւորութիւն տուած չեմք, և զոր, պարզապէս խօսելով, չեմք սիրեր։

Թող զարմանալի կամ հանելուկ չը թուին ընթերցողաց բառերս. կը ցաւիմ որ ժամանակս չը ներեր ինձ երկարօրէն գրել այս նիւթիս վրայ, որ յիրաւի կարժէ, բայց սոյն պարտականութիւնս յատկապէս ձեզ յանձնարարելով, մի քանի օրինակներ և խոհութիւններ յիշեմ աստ, որք թէ' միտքս լաւ կը բացատրեն և թէ շօշափելի կերպիւ զգալի կընեն մեր այս մասին ցուցած անտարբերութեան բոլոր յոռութիւնը։

Ա. Հայք, ընդհանրապէս, 'ի Ռուսաստան, ի Հնդկաստան, ինչպէս նաև ի Տաճկաստան, թէ' բռնութեան և թէ ազատութեան ներքեւ, իրենց ազգային լեզուի մասին աստիկ սիրով մը փայլած չեն, և չեմ սխալիր կարծեմ ըսելով թէ Հայութեան անկման առաջին դարերէն ցայսօր՝ լեզուին ազգայնութեան ամենէն զօրաւոր և սրբազան կապերէն մին ըլլալը գրեթէ գլխովին մոռցուած է եղեր ի մեզ: Արդ, թողունք հեռաւոր տեղերը և ժամանակները, նոյն իսկ մեր մօտը Պոլսոյ մէջ, ուր գրեթէ բոլոր հայք առհասարակ հայերէն գիտեն (գաղատացիք և կեսարացիք խիստ փոքրիկ բացառութիւն մը կը կազմեն), և ուր ազգային զգացումն այսքան բուռն կերպիւ զարթած է վերջին առեններս, բացի կանանց՝ գրեթէ բոլոր Հայք, երիտասարդք, ծերք, աղայք, դպրոցէն նոր ելած պատանիք աւելի կը սիրեն տաճկերէն խօսիլ քան իրենց ազգային լեզուն: Պտըտէ' Պոլսոյ շուկաները, մեծ սրճարանները, իջի՛ր գինետունները, մա՛ն եկու արհեստարանները, Հայն ամեն տեղ գրեթէ հարիւրին 80 տաճկախօս է, և չըսուի մեզ թէ ժողովրդեան գռեհիկ մասն է միայն որ այդ սովորութեան կը հետեւի. մեր ուսեալ և լուսաւորեալ կարծուած մասին մէջն ալ ազգային լեզուն իւր պատշաճ յարգը գտնելէ շատ հեռի է: Տեսէք անգամ մը պատերուն և դռներուն վրայ փակցուած այլ և այլ յայտարարութիւններն, ուր Պոլսոյ ամեն լեզուները կը տեսնուին, բացի Հայերէնէն, զի Հայը տաճկախօս կը ներկայանայ անդ։ Եւ եթէ նոյն իսկ Հայ յայտարարողք իրենց յայտարարութեանց մէջ Հայերէն չեն դներ, զարմանալի՞ է որ պետութիւնն ալ իւր պաշտօնական ծանուցմանց մէջ Հայերէնի ամենեւին կարեւորութիւն չը տար…: Լուսաւորեալ Հայեր ըսինք, և ցաւօք միտքս եկաւ այստեղ Պոլսոյ հրապարակին վրայ իւր վիթխարի ծանուցագրովը նշանաւոր վաճառատուն մը արեգակնափայլ, որոյ ծանուցատախտակին այլ և այլ լեզուաց մէջ 'ի զուր ճգնեցայ գտնել վաճառատիրոջ լեզուն, զի չեմք կարծեր թէ սա իւր ազգութիւնը ուրացէ, կամ եթէ ուրացէ՝ կարենայ ուրանալ: Ասանկ դեռ քանինե՜ր ի Բերա, ի Պոլիս, ուր իրենց հոյակապ խանութներուն վրայ գոնէ Գաղղիարէնին կամ Տաճկերէնին քովիկը իրենց ազգային գրերուն ալ փոքրիկ տեղ մը շնորհելու չեն համիր մեր ազգասէր պարոնայք։ Ինչ հակապատկեր Յունաց հետ… Աստուա՛ծ իմ:

Բ. Բայց լեզուի մասին մեր ողբալի կացութիւնը միայն այս չէ. եթէ ազգին մեծագոյն մասը սովորութիւն ունի ընդհանրապար ուրիշ լեզու գործածելու քան թէ հայերէն, մնացեալ փոքր մասն ալ, որ տանը մէջ (կանայք), դպրոցաց մէջ (տղայք) և շատ քիչ անգամ ասդիս անդին հայերէն խօսիլ կը կարծէ, ի՞նչ տեսակ հայերէն է որ կը խօսի. այն հայերէնը, որ մեր մամիկներն ալ կը խօսէին ասկից 100—200 տարի յառաջ, որ ոչ Հայերէն է և ոչ Տաճկերէն, այլ խառնածին բան մը, հրէշ մը: Իրաւ է, վերջին 30—40 տարուանս մէջ մեր գրական աշխարհաբառը մաքրուեցաւ օտար բառերէ, բայց խօսական աշխարհաբառնիս գրեթէ քայլ մ'անգամ առած չէ, և ամենքնիս ալ, առհասարակ, նոյն իսկ ուսումնականք և վարժապետք, սովորութիւն ունին ամենօրեայ խօսակցութեանց մէջ 'ի կիր արկանելու զայն աղճատ լեզու 'ի ծաղր օտար ունկընդրաց, որոց կէս առ կէս հասկնալի կըլլայ խօսածնին, և որք խիստ խեղճ գաղափար մը կը կազմեն զայն խօսողաց վրայօք, զի «լեզուն ազգի մը հայելին է»: Բայց զարմանալի չէ՞ արդեօք տեսնել նոյն իսկ բարձր կարգերու հայ դպրոցականք, որք ճարտասանութիւն և տրամաբանութիւն կը կարդան, ուղիղ Հայերէն խօսելու վարժութիւն բրած չըլլալով, նոյն անհեթեթ լեզուն կը գործածեն թէ՛ ի դպրոցի և թէ այլուր: Այսպէս „վէրտիվէնէն վար իյնալ, թէքմէ զարնել, չիշման տղայ, ղայիֆ մարդ, օրթախաթ, թավանէն կախուած, պաճախը ուռնալ, պօղազը ցաւիլ, եօխուշը ելնել, և այլն, և այլն, ասացուածներ, զորս ամենքնիս առանց հոգ ընելու կը գործածեմք: Ես այս մասին՝ շիտակը՝ հետաքրքիր եղայ իմանալու թէ կա՞յ դպրոց մը ուր կանոնագրին մէջ Հայերէն մաքուր խօսիլն իբր սահմանական պատուիրան ըլլայ. դժբաղդաբար մինչեւ ցարդ ոչ ուրեք այսպիսի բան մը չեմք կրցած տեսնել:

Եթէ կուզեմք օտարաց առջև յարգ և համարում ունենալ, սիրելու և յարգելու եմք մեր լեզուն, և ջանալու եմք բարձրացնել զայն: Մասնաւորապէս Ուսումնական խորհուրդն և դպրոցական տեսչութիւնք հսկելու են որ իրենց յանձնուած մանկտին ամէն որ եւ է ուսմունքէ յառաջ, որքան կարելի է մաքուր Հայերէն խօսել վարժուի, և սէր ունենայ անոր վրայ, որպէս զի դպրոցէ ելնելէ վերջն ալ, շուկայի մէջ եւ այլուր, ամօթ չը համարի իրեն նոյն լեզուաւ խօսիլ իւր Հայ ընկերակցաց հետ. ապա թէ ոչ, ո՛չ միայն գրաբառն, այլ նոյն իսկ աշխարհաբառնիս ալ մեռած լեզու մը պիտի դառնայ, քանի որ կենդանի բարբառով խօսուելը հետզհետէ դադարի:

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 25-ին

Մեր քաղաքացի բժիշկ պ. Լևոն Տիգրանեանցը անցեալ օրը ուղևորվեց դէպի Թիֆլիս։ Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ նրա ճանապարհորդութեան նպատակն է թոյլտւութիւն խնդրել Գրաքննական կօմիտետից հրատարակելու Երևանում մի բժշկական ամսաթերթ եկող 1881 թուականի յունվար ամսից։ Մենք, երևանցիներս չենք կարող ուրախութեամբ չը լսել այդ բարի լուրը և չը շնորհաւորել պ. Տիգրանեանցին նրա բարենպատակ ձեռնարկութեան համար։

Պարոն բժշկի ձեռնարկութեան վերաբերութեամբ մենք հրահանգներ տալու միտք չունենք, որովհետև նա արդէն որոշած կը լինի, թէ ինչ ուղղութեամբ, ինչ նպատակով է հրատարակելու իր ամսաթերթը, բայց թող աւելորդ չը լինի յայտնել այստեղ մեր համեստ կարծիքը այդ ենթադրելի հրատարակութեան մասին։

Հասկանալի է, որ եթէ պ. Տիգրանեանցը իր գործն սկսելու լինէր Եւրոպայի քաղաքներից մէկում, նա գուցէ լցնէր իր ամսաթերթը բժշկականութեան վերաբերեալ նոր գիտերով, կամ նրա մէջ տեղի տար այնպիսի յօդուածների, որոնք ֆիզիքական կամ քիմիական այս ինչ ու այն օրէնքներով հաստատելիս լինէին բազմատեսակ հիւանդութիւնների ծագումը, տևողութիւնը, նրանցից առաջացող վտանգի չափը, և այլն և այլն։ Ուրեմն այն ժամանակ կարելի էր ասել, որ այդպիսի հրատարակութիւնը ծառայելու է ուղղակի գիտութեան օգտին և նրա հրատարակիչը նպատակ ունի բռնել բժշկականութեան ասպարիզում մի նշանաւոր տեղ իր տարածած գաղափարներով ու գիտերով։ Բայց Երևանի պէս մի գաւառական քաղաքում բժշկական լրագիր հրատարակողը, ուրեմն և պ. Տիգրանեանցը՝ հեռու այդ բոլորից պէտք է, մեր կարծիքով, մի այսպիսի նպատակ ունենայ։ Նա քաղաքներում առողջապահական հարցերի վրա խօսելիս, անմաքրութիւններից առաջացող վտանգը հասկացնելիս, պէտք է պերճախօս, վառ քարոզիչ լինի. Նա մեր գիւղերի մահացուցիչ ապականութիւնները, տների կեանք մաշող դրութիւնը, դասաւորութիւնը նկարագրելիս՝ պէտք է խիստ պահանջող, հարուածող լինի. Նա գիւղացու անասուններին, թռչուններին սպառնող տարափոխիկ հիւանդութիւնները գրելիս, պէտք է կատարելապէս քահանայի պաշտօն կատարէ, հասկացնելու համար այդ գիւղացուն, որ այդ բոլոր անբաղդութիւնները ո՛չ Աստուծու պատիժ են, այլ բնութեան պատահական երևոյթներ. մի խօսքով նա ամեն դէպքում, ամեն քայլափոխում պէտք է ներգործել կարողանայ իր գրչով հասարակ ժողովրդի վրա, որին ամենևին ծանօթ չեն մաքրասիրութեան կանոններն ու օգուտները։

Գաւառում հրատարակվող բժշկական լրագիրը գլխաւորապէս պէտք է հետաքրքրվի տեղական հիւանդութիւնների հետազօտութիւններով և նրանց առաջն առնելու միջոցներով։ Սրանով նա մեծ գործ կատարած կը լինի և հասած կը համարվի իր նպատակին, որովհետև մատչելի կը լինի ամեն դասակարգի մարդկանց։

Մենք չենք մոռանում յիշել այստեղ և այն բժշկական միջոցների մասին, որոնցից մինչև այժմ օգուտ են քաղում մեր տնային բժիշկները հիւանդին առողջացնելու համար։ Եւ զարմանալի բան է, երբեմն այդ տանու բժիշկներից գտնվում են այնպիսիները, որոնք պատահմամբ դուրս ընկած մէկի ձեռքը կամ ոտքը և կամ պատերազմի դաշտում անյուսալի վիրաւորուածին առողջացնում են կարճ միջոցում. այն ինչ մենք տեսել ենք շատ գիտնական բժիշկներ, որոնք միակ ելք են համարել այդ դէպքերում հիւանդոտ կամ կոտրած ոտքը, ձեռքը կտրել։ Թող չը